

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԱՆ

Տարեկան . . 12 Ֆր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով

Տարեկան . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ


Տարեկան . . 2.60 Տօյար

Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոթացնակ տողը

20 սանդիս



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Յ Է

action du journal

"Iravouk"

VARNA, Bulgarie

Редакция



на ВѢСТНИКЪ

"Иравункъ"

ВАРНА (България)

Գրութիւնք եւ

լեւ տրուիր



Հատկական տօներու առթիւ յառաջիկայ Չորեքշաբթի Իրաւունք չը պիտի հրատարակուի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒԴՍՐԱՔ

Ռուսիա իր արտաքին քաղաքականութեամբ մինչ անյազ աշխարհակալութեան մը կը հետապնդի, ներքնապէս ալ առաւել քան երբեք շփոթ և արհաւիր կայունութեան մը մէջ կը գտնուի: Կարճ ժամանակի մը մէջ պետական բարձր անձնակազմին կատարուող սպանութեան փորձերը ու սպանութիւնները պարզ ոճրագործութեանց կարգը դասուելէ շատ հեռի են:

Նախարար Պօկոլտեբովի սպանութիւնը, Ս. Բօպիե տօնօսչիի դէմ դաւադրութիւնը, ոստիկանապետ Թրեբօզիի վրայ կրկնուած սպանութեան փորձերը և վերջապէս անցեալ օր ներքին գործոց նախարար Սիբիակինի սպանութիւնը կուգան հաստատել թէ բաւական տարիներէ ի վեր անհետացած կարծուող ոչնչականութեան մէջդտը այսօր ալ իր գործադրիչները ունի:

Արքայապան ոչնչականները (նիհիլիստ) անհետացան կամ դադարեցան գործելէ, որովհետեւ անոնց խորհուրդը եղանակը իրենց ժամանակակից երիտասարդութեան անմարտելի էր, ու հետեւեալ արդի սկզբունքին հետեւողները նշանակելի թիւ մը չէին կազմեր:

Բայց այսօրուան ահաբեկիչները ռուսական համալսարաններէն կարծողներն են: ասոնք ամէն մէկ կեդրոնի մէջ իրենց հազարաւոր գաղափարակիցները ունին: Մտէպ ձայն կը բարձրացնեն, այսինչ կամ այնինչ օրէնքին կամ բարձրագոյն հրամանին դէմ: Եթէ իրենց բողոքը անխելի մնայ գործադուրկընեն, ցոյցեր կը սարքեն բիւրօնը բազմութեամբ, և վերջապէս ոստիկան-զինուորներու դէմ ճակատ ճակատի կը կռուին: Իրենց այս յանդուգն շարժումները զինուորական ուժի տակ որչափ որ

ալ առ երեւոյթս զսպուին, հարկաւորներ աքսորուին ու պատժուին, այդ խիստ միջոցները անոնց պաշտպանած գաղափարին աւելի տարածման կը նպաստեն: Իրու գաղափարականները Ժէօն Թուրքերու չեն նմանիր, իրենց անհատական արիւնին գնովը գաղափարին: Երկուստեք տանել կը ջանան: Վերջապէս այսօրուան ռուս ահաբեկիչները հին ոչնչականներուն չափ յանդուգն ըլլալէ զատ թիւով խիստ ստուար են և յարաճուն, ապագայ սերունդն ալ իրենց հետն է: Հետեւեալ Ռուսիոյ ներքին վարչական կազմակերպութեան կամ բացարձակ միապետութեան արդի եղանակը դատապարտուած է կա՛մ մօտալուտ հիմնական բարեփոխութիւն մը կրելու և կա՛մ թէ մեծ յեղափոխութեան մը բռնկոյցին տակ փշուրելու:

Անգլո-Պօլսկայա պատերազմին վերջէն Նախապետ սկսուած բաւականացուցութիւնը անորոշ վիճակի մը մէջ է այսօր: Անգլիացիք պօէր պատուիրակներու բանակը մէկ առաջադիւր, զինադադար, բացարձակօրէն մերժեցին ինքզինքնին յաղթող նկատելով: Անգլիոյ այս մերժումը բոլոր անկողմնակալ թերթերէ կը քննադատուի: Բայց պօէր պատուիրակները ըստ երեւոյթի այդ մերժումին համակերպեցան: Երկուստեք ուրիշ առաջարկներ ալ ներկայացուցան: պատուիրակները այդ առաջարկութեանց մասին պատերազմող պօէր հրամանատարներու հետ խորհրդակցելու և կարծիք առնելու նպատակաւ ուղեցին անձամբ անոնց քովը երթալ ու բերան առ բերան խորհրդակցել: Հետեւեալ բար Բրէթօրիայէ մեկնեցան քանի մը օրէ ի վեր: Այժմ չը գիտցուիր թէ պատուիրակներուն բերելիք պատասխանը և առաջարկուելիք վերջնական պայմանները ի՞նչ պիտի ըլլան: Կարծողներ կան թէ պատուիրակներու այս մեկնումին ներքին նպատակը աւելի Եւրոպա գտնուող Պօլսկայայէ մեծերու և երկրին մէջ պատերազմող հրա-

մանատարներու միջեւ խորհրդակցութիւն մը կատարելու առիթը ձեռք ձգել ըլլայ, քան թէ հաշտութեան համար Անգլիացիք առաջարկած ծանր պայմաններուն վրայ խորհրդակցել:

Կըսուի թէ արդէն Պօլսկայա ուրիշներու զխաւոր առաջարկները շատ համետ են, այսինքն՝ ընդհանուր ներում Բարեխոսոյ ապստամբներուն, ազատութիւն արտօրուած ու բանտարկուածներու և արդի զինուորական վարչական խորհրդին պօէր անդամներու ալ նշանակումը: Բայց առայժմ սա կէտը շատ որոշ չէ Պօլսկայայի հրամանատարները այս պայմաններով պիտի գոհանան: այդ մասին տարբեր կարծիքներ կան:

Անգլիացիք եւս որչափ որ, իրենց արժանապատուութենէն բան մը չը կորսնցնելու համար, շատ խորտաքիւրք մը կը բռնեն բանակցութեան պայմաններուն առթիւ: սակայն ներքնապէս աւելի կը բաղձան հաշտութիւնը կնքել: որովհետեւ Լոուրաթ թագաւոր իր թագադրութեան հանգէտներէն առաջ պատերազմին վերջ տալ հուզէ և Անգլիոյ շահն ալ իսկապէս այդ կը պահանջէ, քանի որ Պօլսկայայի ընդդիմադրելու դեռ բաւական ուժ ունին և առանց հաշտութեան պատերազմը կրնայ նոյնիսկ տակաւին տարիներ տեւել:

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՂԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Ինչպէս խօստացած էի ձեզ՝ ահա կուգամ այսօր տեղւոյս հայ գաղթականներու մասին մէկ քանի տեղեկութիւններ տալ ձեզ, տեղեկութիւններ որք սակայն պիտի դառնացնեն միայն ձեր հոգին, եւ որք ափսոս մէկ պատկեր կը ներկայացնեն արտասահմանի գրեթէ բոլոր հայ կեդրոններու մէջ տիրող անկերպարան վիճակին:

Եգիպտոսի հայոց թիւը, գաղթականութեանց տարիներէն ի վեր հետզհետէ ստուարացած, 15000ի կը հասնի գրեթէ:

Այս կարեւոր գաղթականութեան կացութիւնը, ներկական տեսակետով, աննախանձելի չէ երբեք: Թէ ի Գահիրէ եւ թէ Աղեքսանդրիա կան բազմաթիւ հայ մեծատուններ, կարեւոր գիւղեր մը գրաւող բարձրաստի-

ճան պաշտօնեաներ եւ առաջնակարգ վաճառականներ ու գործարանատէրներ: Ազգային հաստատութեանց պիտոճէները երաշխաւորուած են կալուածներու հասոյթներով: Պաշտօնայք լաւ եւ կանոնաւոր կը վարձատրուին: Աղքատախնամները պահեստի դրամներ կաւեցնեն:

Բայց հակառակ այս նպաստաւոր պայմաններուն, բարոյական տէստէսով եգիպտոսը հայ գաղթականութեանց մէջ ամենայնայնայն է կրնամբ ըսել:

Երիտասարդութիւնը՝ քիչ բացառութեամբ, անբարոյականացած փրտուած է բոլորովին օտարացած, զգացմամբ քարացած, օտարներու մօտ իր ազգութիւնը յաճախ իրեն ամօթ համարելու աստիճան ինկած: Մէկ քանի զիպուածոյ բերմամբ բացառութիւն չի տէր եղող բաշաներ եւ պէյեր, ազգային գործը ձեռք առած կատարեալ կամայականութեամբ կը վարեն զայն: Օրէնք, սահմանադրութիւն, կրօնք, եկեղեցւոյ սովորութեանց նախապատուութիւն, ազգային արժանապատուութիւն կանխատեսան անոնց քով քմահաճոյքի մը թիւթեւ հարուածով: Անտարբերութեան սառն ծիծաղը կը պատասխանէ աչնիւ սրտերու արդար վայրոյթին: Կը հեգնեն ու կարհամարհեն հայրենասէրին ետանդը, ճշմարտասէրին անկեղծութիւնը: Կատեն իրենց մայրենի լեզուն՝ զայն չուզել լսելու եւ իրենց ազգային տառը զայն իրենց տապանաբարբու վրայ զննել իսկ անարժան դատելու աստիճան: Իրենց ազգեցութիւնը ի գործ կը դնեն ժողովուրդին ազատութիւնը կաշկանդելու, անոր իրաւունքները կապտելու համար միայն, բայց ոչ երբեք ազգօգուտ ձեռնարկի մը ի նպաստ: Իրենց ունեցածն միլիէմ մը չեն զոհեր ազգին համար, բայց որիչներու կտակածները ոչնչացնելու ամեն ճիգ կը թափեն:

Միւշտեա քանի մը հարիւր ֆրանք այս կամ այն որբանոցին ի նպաստ հաւաքելու համար, անհուն ջանքեր կը ընեն ամեն տեղ ժողովուրդին մէջ, մինչդեռ մայր հայրենիքի մեր եղբայրներ պատառ մը հացի գոյն փոխարէն իրենց կեանքը եւ հաւատքը տալու դատապարտուած են յաճախ, այս տեղ եգիպտոսի մէջ, Աղեքսանդրիայի մէջ տասնեակ հազարաւոր անգլիական ռազմիկներ ազգին ունեցածն օտարներու կը թողնել թաղական խորհուրդներու, եկեղեցականներու կողմէ, թերեւս քանի մը հարիւր կամ քանի մը հազար ոսկւոյ կատար մը գրպանելու առիթը ձեռք ձգելու համար եւեթ: Ինչի՞ քանի՞ որբանոցներ, առանց օտարին նպաստին զիմում ընելու հարկին մէջ գրտ-

նուեւելու չէին կարող արդեօք հիմնուել այդ դրամներով, եւ քանի հարիւրաւոր հազարաւոր որբ մանկիկներ չպիտի խլուէին մահուան ճիւղաներէն կամ աւելի դառն օտարներու, կեղծ մարդասէրներու, փեռկեղեւն յարկերէն:

Կան եւ օմանք որք թէեւ տարփուհեոյ մը մէկ ծիծաղը չեն փոխեր ամբողջ ազգութեան հետ, ազգասէր երեւնալու հարկին մէջ կը գտնուին, միմիայն իրենց անձնական ատելութեան եւ կիրքերու յազուրդ տալու թաքուն նպատակաւ մղած պայքարներուն մէջ ժողովուրդի ձայնին կարենալ կոթնելու համար: Այս տեսակ կեղծարարներ ի հարկէ չեն վարանիր պաշտպանելու ամենազգուելի ընթացքներու մէջ գտնուող իրենց անձնական բարեկամներ, ընդ որս նաեւ մեր եկեղեցւոյ ծէսերը ծաղրող, օտարին ծառայող եւ օտարէն վարձատրուող անձնաւորութիւններ, զորս ասղին անգին իբր Հայաստանեայց եկեղեցւոյ պատկանող ներկայացնելով ազգային կրթական յարկին մէջ կը մտցունեն՝ կրօնագիտութեան դասատուի պաշտօնով...: Ասոնց շարքէն են նաեւ հայրենասիրութեան ոգին ըմբռնելու անբնական հիւանդ ուղեղներ, որք ազգասիրութիւնն ու ուղղամտութիւնն (իրենց իմացած կերպով) իրենց մենաշնորհն կարծելու ծիծաղելի յաւակնութիւն մըն ալ ունին: ազգը փրկել կը կարծեն ողորմելի թերթի մը խնամակալութիւնը ստանձնելով, որու խեղճ խմբագրէն իրենց տուած մէկ երկու հարիւր դր. ի փոխարէն ստրկական հնազանդութիւն կը պահանջեն, սակայն եւ այնպէս սպարանին ունեցած պարտքերն ին վճարելու երբէք փոյթ չեն ըներ...: (*)

Ամուսնութիւնը, ազգի մը կենսականութեան, բարոյական եւ նիւթական զարգացման հիմը, շատ հազուադէպ է Եգիպտահայոց մէջ: Ամուսնութեան, օտար բարքերու հետեւողութեամբ, գողութեան հաճոյքներով, ապօրէն կենակցութիւններով կանցնեն իրենց ժամանակը եւ կամ հանրատանց աղտոտութեանց մէջ կը խամբեն իրենց երիտասարդութիւնը:

Հակառակ եղած բազում ծախքերու,

(*) Ականջը խօսի Վառնայի վաշխառու թաղականին:

Ծ. Խ.

կրթական յարկերու վիճակը՝ թէ հոս եւ թէ Գահիրէ, խիստ աննախանձելի է եւ հինգ վեց տարիէ ի վեր անոր բարեփոխման համար երբէք ջանք չէ եղած լրջօրէն: Խաւարածնուող եւ իրենց կոչման անարժան անձինք յաճախ մուտ գտած են եւ կը գտնեն ուսուցչական մարմիններու մէջ, որոց մասին ստէպ ամենազայթակղելի լուրեր ժողովուրդի ականջը կուգան: Կը պատահի որ աշակերտութիւններու նկատմամբ շատ անվայել ընթացքի մէջ գտնուին այս կամ այն ուսուցիչները...: Քննութիւններ կը բացուին, ժողովուրդի մէջ յուզում կը տիրէ, ամբաստանեալին համախոհ-պաշտպաններէն հրապարակաւ խայտառակուողներ կըլլան պաշտօնական անձնաւորութեան մը կողմէ: այլ մի՛ հարցներ բարեկամ թէ ամբաստանեալը իբր սրիկայ մը կը վռնուի՞ վարժարանէն, թէ՞ ամբաստանողները զրպարտիչ կը հռչակուին եւ թէ ի՞նչ ապահովութիւններ կը տրուին ժողովուրդին նոյնանման դէպքի մը չը կրկնուելու մասին: Ո՛չ այս, ո՛չ այն եւ ամբաստանեալը՝ առանց երբէք արդարացած ըլլալու, կը շարունակէ իր գասախօսութիւնները...: Իբր թէ՛ ճարժեր եղիր քեզիս յիսալմիսի մը համար դատաւարութիւնով մը բարոյապէս մեղքնել երիտասարդ մը: Բաշային կամքը ա՛յնպէս է եղեր: Իսկ մանկութիւն... ա՛յն փոյթը չէ ոչ բաշային ոչ բօշային: «մալէ՛շ», Եգիպտոսի մէջ կապերնը:

Աղքատներու Սպ. Երկսեռ վարժարանի աշխատանքներն ալ, որ նախորդէն զարգացման տեսակէտով շատ չը տարբերի, ժամանակին Պէշիկթաշի Սպ. վարժարանէն արտաքսուած ոմն է, որ իր երկրորդ ապօրէն կենակցին հետ ժամանակէ մը ի վեր քաղաքս հաստատուած է: Իսկ տնօրէնութիւն, աստի երկու տարի առաջ Պոլսկարիայէ գիշերով փախչող սնանկացեալ վաշխառուի մը կողակիցն է, որ իր խիստ սահմանափակ զարգացմամբ աւելի վարպետ տոտտի մը պաշտօնին կը յարմարի քան թէ կարեւոր կեդրոնի մը վարժարանի մէջ բարձրագոյն կարգերու վարժուհուութեան:

Ազգային վարժարանաց այս ցաւալի վիճակը կը ստիպէ, թաղականներէն եւ հոգաբարձուներէն սկսեալ, քիչ թէ շատ նիւթական կարողութեան տէր եղողները իրենց զաւակները յանձնել

օտար յարկերու, որով օտարամտութեան ախտը անոնց մատաղ հասակէն բոյն կը դնէ սրտերուն մէջ:

Այսպէ՛ս, այս ազա՛տ երկրին մէջ իւս, բթիտանական բարձր դրօշի հովանին տակ, ուր ո՛չ ուսական ցուլիչ քաղաքականութեան բռնապետութիւնը, ո՛չ թրքական բարբարոսութիւնն ունինք մեզ իբր արգելք, մեր ապագայ սերունդի կրթութեան եւ մտաւոր զարգացման խնդրոյն մէջ՝ որ հայ անուան պահպանման միակ երաշխիքն է, կը թերանանք անորակելի անհոգութեամբ մը:

Վ. Ք.

Աղքատագիր, 20 Մարտ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

... Խմբագիր,

Քանի մը ամիս առաջ կարգ մը խեղճ հայեր խաբելով սահմանագլուխ զրկող եւ այդպէսով անոնց դժբաղդ վերագարծին պատճառ եղողներու անունները չէին հրատարակած: Ինչու այս վերապահով կընէք երբ աստին անոնք նոր զոհեր պատրաստելու կը ձգտին ու իրենց ձրիակերութիւնը կը շարունակեն:

Վերադարձող դժբաղդ զոհերուն տխուր խոստովանութիւններէն այսօր հաստատուած է թէ, զիրենք խաբող ծխափաճա Մուրադը, Մակար Բովհաննէսիանն եւ Նէվրուզը եղած են: Ասոնք այդ դժբաղդները ճամբու դնելէ անմիջապէս լստոյ «հա՛ մենք սահմանագլուխ մարդեր զրկեցինք ու կրկին պիտի զրկենք» ըսելով խեղճ ու միամիտ պանդուխտներէն դրամ հաւաքել ելած են: Մինչդեռ այդ դրամներէն 5 սանդիկ զրկուողներուն չէ տրուած, հակառակ անոնց՝ դրամի չգոյութեան պատճառաւ ողբալի կացութեան մը ենթարկուած ըլլալուն իրենց բոլորովին անձնաւթ երկրի մը մէջ:

Կարծեմ հրապարակագրի մը նուիրական պարտականութիւնն է

խաբեմաները մատնանիշ ընել, որ պէս զի ժողովուրդը զգուշանայ կրկին անոնց թակարդը ինչպէս:

Այդ խաբեմաներու աշխատակցութեամբ հրատարակուող թերթը դառն իրողութեան առջեւ ինքզինքը կամ իրենները դատապարտութիւնէ փրկելու համար, ստիպուած է գործուած խաբէութիւնը խոստովանել, անշուշտ խաբողներու անունը առանց տալու, որովհետեւ ծայրը իրեն ալ կը դպչի: Բայց ես ամենայն համարձակութեամբ կը հրապարակեմ, թէ պատասխատուութիւնը կը ծանրանայ վերագրեալ երեք անձներուն վրայ, եթէ իրենց հետ ուրիշներ ալ չը կան:

Տեղեակ ոմն

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր նախորդ թուով հաղորդած էինք Օրմանեանի եւ մէկ քանի առաջնորդներու Սուլթանէն շքանշաններ ընդունած ըլլալին: Այս անգամ ալ Պոլսոյ երկուշարթի օրուան թերթերուն մէջ կը կարդանք թէ Սուլթանը Պատրիարքարանի հետեւեալ պաշտօնեաներուն ալ նշաններ տուած է:

Գործակատար Տիգրան Տէր Ներսէսեանի՝ Իւլայի Ա. աստիճան. թուրքերէնի քարտուղար Կարապետ Խաչատուրեանի եւ հայերէնի դիւանադպիր Բարթող Թէրեանի՝ Բ. Միւլթէմայիզ. Պատ. փոխա. նորդ Տ. Գարբիէ Եպս. Ճէվհահիր-ճեանի՝ Բ. Մէճիտիյէ. Քաղ. Ժողովոյ անդամներէն Գրիգոր Գարակէօզեանի՝ Գ. Օսմանիէ. Սեպուհ Տէմիրճիպաշեանի, Մէհրան Սէթեանի եւ Մկրտիչ Ասասեանի՝ Գ. Մէճիտիյէ. Պատրիարքարանի բարապաններէն Մարտիկ Խաչատուրեանի եւ Կարապետ Սրապեանի՝ Ե. Մէճիտիյէ:

— Կարնոյ Առաջնորդարանէն Պատրիարքարան տրուած հեռա-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (11)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՆԵՐՈՒ ԼՐՏԵՆԵՐ

Մեծափոր Մօլլան, որ անթարթ աչքով իր դէմը գտնուող մարդը կուսուսնասիրէր, հասկցաւ թէ շահամուլութեան մարմնացումն էր ան. հետեւաբար անզգալի կերպով անոր հոգին ձեռքին մէջ առնելու ջանաց:

— Մտիկ ըրէ՛ք, Գիլր Զա՛քօ, ընդհատեց նենգամիտ Մօլլան. երկուքս ալ կը ցաւինք ձեր վիճակին վրայ, որովհետեւ կը տեսնենք որ չափազանց գործունեայ ու աշխատասէր մէկն էք դուք: Միեւնոյն ատեն կը ցաւինք Ռէս Մէլիքին պէս բարի անուն հանող մարդու մը վրայ, որ չէ թէ կա-

րեկցարար պիտի աշխատէր ձեր երջանկութեան համար, այլ պարտականութիւն մը համարելով, ձեռքէն եկածը չխնայէր: Ի՞նչ որ է. գիտցէ՛ք որ անկեղծօրէն կըսենք ձեզի թէ՛ նեղութիւններէդ պիտի ազատուիք, երբոր յանձն առնէք փոքրիկ ծառայութիւն մը մատուցանելու:

— Եթէ կարող եմ, ընդհատեց Գիլրը, կը խոստանամ ամենայն սիրով կատարելու, բաւական է որ դուք վստահ ըլլաք իմ վրաս:

— Մենք վստահ ենք ձեր վրայ, նկատել տուաւ Մօլլան. այդ մասին երբէ՛ք կասկած մը չունինք. միայն թէ կը վախնանք որ չուզէք ճշմարտութիւնը խոստովանիլ այնպիսի կէտերու մէջ զոր պէտք ունինք:

— Ամենեւի՛ն... չնշտեց Գիլրը:
— Կերպնո՛ք:
— Կերպնում:
— Աստճող վրայ:
— Աստճոյս վրայ:
— Խիստ լա՛ւ. ըսէ՛ք մեզի թէ՛ մօտաւորապէս երկու ամիսներ առաջ հոս

երիտասարդ մը եւ մանկամարդ աղջիկ մը եկած են:

Գիլր Զաքօն իր հոգեւոյն բովանդակ զարշութեամբ սարսափ եւ իր խոր ու քստմնելի աչքերու մէջ մոլորագին նայուածք միջնաւ թանձր ու անաւոր ստուերի մը պէս:

— Երիտասարդ մը ու մանկամարդ աղջիկ մը... բացազանչեց խոտվայոյզ ձայնով մը:

— Այո՛... երկուքն ալ քուրտի հագուստով տարազ կը կրէին վրանին, նկատել տուաւ Մօլլան:

— Ըի՛չդ է... ասոնք քանի մը օր առաջ հոս էին:

— Ո՛ւր գացին:
— Ո՛հ, Մօլլա էֆէնտի, ի՞նչ ըսեմ... մի՛ հարցունէք ինծի... գիտցած եղէ՛ք որ ողջ չեն թողոր գիս, երբ իմանան որ ես եմ ձեզի յայտնողը, պաղատեց ճարդի Գիլրը կեղծ ձեւով մը:

— Մի՛ վախճաք... եթէ պաշտօնէդ ալ զրկուիք, վստահ եղէ՛ք որ մենք ստացած գումարը կընայ ձեր ընտանեաց երջանկութիւնն ապահովելու, ա-

ռարկեց Մօլլան. հետեւաբար հոգ մի ընէք:

Այս անգամ Գիլր Զաքօն երկու հակադէմ ու անագորոյն գաղափարներու մէջ մնաց. մին գրամն էր, որ կերեւա՛ր իր ամբողջ հմայքով, ամբողջ ձգողական ուժով. իսկ միւսը վախն էր որ կը պատկերուէ՛ր զարհուրելի երեւոյթով մը. ի՞նչ ընէր, ի՞նչ ըսէր... գիտէր թէ բաղդ մարդիկ ուղեւին սասնկ պարագաներու մէջ զարնելու կուգար, գիտէր թէ մարդիկ ապագայ հարստութիւններ ասանկ միջոցներու մէջ գիգելու յաջողած էին. մէկ խօսքով՝ համոզուած էր թէ հանգիտ կեանքն ա՛յն մարդուն էր որ առիթն գիտէ օգտուիլ: Բայց... ինչպէ՛ս համարձակէր չէ՞ որ պիտի խմացուէր ամեն բան, չէ՞ որ ամբողջ գեղը թշնամի պիտի ըլլար իրեն:

Մտածումները զանկին ներքեւ կը թանձրանային, ինչպէս անաւոր ու մթին ստուերներ. ու հոգին իր բովանդակ գալարումով կը պրկուէր, ինչպէս սեւ օձ մը՝ ժանիքաւոր երկաթէ ցանցի մը մէջ:

գիր մը կիմացնէ թէ անցեալ հիւ-
շաբթի եւուրթաթ օրեր չորս անգամ
երկրաշարժի բուռն ցնցումներ պա-
տահած են . ժողովուրդը նորէն
սարսափահար եղած է . բայց այս
անգամ բարեբաղդաբար տնձի կո-
րուստ եւ նոր աւերումներ չեն ե-
ղած :

— Ոսկան էֆէնտի անուն հայ
արձանագործ մը Յունաստանի կըր-
թական նախարարութեան կողմէ
հրաւիրուեր է Հէրմէսի արձանը
յարգարելու համար :

— Տ. Տիրան Ալիքսանեան Պեր-
լինի մէջ մեծ նուագահանդէս մը
տուեր է , ուր ջութակի վրայ ե-
րաժշտական շատ դժուարին կտոր-
ներ նուագեր է փայլուն յաջողու-
թեամբ :

— Ստացանք Հնչակի նոր թիւը ,
1 Ապրիլ թուականով եւ «Ժե-րդ
տարի , թիւ 1» թուահամարով :
Ժամանակէ մը ի վեր ընդհատ
ուած Հնչակեան կուսակցութեան
այս հին օրակներ այս անգամ սոսկ
Որոշմանական դուրս կուգայ ու
կըսէ .

«Մենք միանում ենք , որովհե-
տեւ այդ է պահանջում կիսաւեր
դարձած , տանջուած , չարչարուած
մեր սիրելի , մեր պաշտօնի Հայ-
րենիքի ազատութեան ԳՈՐԾԸ...
Մենք միանում ենք , որովհետեւ
այդ է հայ ժողովուրդի ԿԱՄԻՔԸ...
Մենք միանում ենք , որովհետեւ
վերջապէս այդ ժամանակի պա-
հանջն է , այդ տանեակ տարինե-
րից ի վեր սկսած ծանր , դժուար
գործի յաջողութեան միակ ան-
հրաժեշտ պայմանն է» :

— Կարնոյ արկածելոց ինպատո
տեղս կատարուած հանգանակու-
թենէն յետամնաց 40 ֆրը եւս
Տ. Գալուստ Սահաթեանի միջո-
ցաւ կարին զրկուած ըլլալով , անոր
պաշտօնական ընկալագիրը խժ-
բագութեանս ներկայացուցած է
ի գիտութիւն հասարակութեան :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Կիւն մը 18 տարւոյ մեջ 62 զաւակ ծնած

Էսք-Ուեսթի գործակալութիւնը կը
հաղորդէ թէ իտալացի Մատտալէնա
Կրանաթա անուն կին մը 18 տարի
իր ամուսնոյն հետ ապրելով , 62 զա-
ւակ ծնած է , 59 մանչ 3 աղջիկ : Այս
առթիւ Տ. Մէլիք Ս. Դաւիթ Բէկ
շահեկան յօդուած մը գրած է , զոր
տեղի ոյ անձկութեան պատճառաւ մեր
յաջորդ թիւին յետաձգեցինք :

Քաջող ճամբայ

Անոնք որ 1910 թուականի պուցա-
հանդէսին ներկայ գտնուեցան տեսան
թէ այդ միջազգային տօնավաճառին
մէջ տեղ մը կար ուր մարդս փոխա-
նակ իւր ոտքերն յոցնեցնելով քա-
լելու , իւր ոտքերուն տակ գտնուող
ուղին կամ ճամբան էր որ կը քալէր
եւ այդ տեղին «քալող ճամբայ»ի ա-
նունը կուտային , որն այն ժամա-
նակ այնքան յաջողութիւն զտաւ եւ
ամենուն խնդրէր պատճառեց : Արդ բա-
րիկ քաղաքն որ այնքան դժուարու-
թեամբ իւր քաղաքային երկաթուղին
ունեցաւ (մէքսիքոյիսին) որը միայն
գետնի տակէն կերթնէր եւ իրարա-
կան շարժումով , հիմա կուգէ հաստա-
տել քալող ճամբան ալ , որ նոյնպէս
գետնի տակը պիտի գտնուի : Յայտնի
ճարտարագէտ մը ճարտարագէտներու
ընկերութեան ներկայացուցեր է ծրա-
դիր մը որով կուգէ հաստատել Բարի-
զի տակը 40 քիլոմէթր երկարութեամբ
քալող ճամբու գրութիւնը : Մրգիրը
երեք ուղիի բաժնուած է իրարու քով
գրուած եւ մէկը միւսին հակառակ
կողմը գացող . որոց ամէն մէկը 4, 8,
12, քիլոմէթր ճամբայ կրննի մէկ
ժամուան մէջ , կարելի պիտի ըլլայ
չորրորդ ուղի մը ալ աւելցնել որ աւելի
արագ քայլէ , ճանապարհին ամեն տեղ
աթոռներ պիտի լինեն եւ այս նոր
գրութեամբ քաղաքները (թէ ճամբորդ-
ները) պիտի վճարեն միայն 10 սան-
դիմ :

Շունեղ Յրանալի մեջ

Գիտէ՞ք թէ Յրանալի մէջ շան հա-
մար տուրք մը վճարելու է , եթէ
կուգէ՞ք պահապան շուն մը պահել

պէտք է վճարէ՞ք տարին հինգ ֆրանք ,
իսկ եթէ զարդի համար է ձեր շունը
կը վճարէ՞ք տարին 10 ֆրանք : Այսօր
Յրանալի մէջ կը գտնուին 2 միլիոն
940, 945 Է աւելի շներ , ըստ վերջին
մարդահամարին (․․․) , զարդի շներու
թիւն է 800 հազար : Անցեալ տարի
Ֆրանսական կառավարութիւնը յունե-
րու երեսէն վաստակած է (իւր տուրք)
8 միլիոն 800, 000 ֆրանք , ըսել է ա-
մէն մէկ շուն երեք ֆրանք շահ թե-
րեր է : Վերջապէս հաշիւ ընելով տե-
սած են թէ 100 մարդ գլխի 7 շուն
կիյնայ եղեր :

Մեկ միլիար վայ կեան

Գիտէ՞ք թէ Յիսուսի ծնունդէն ի վեր
մինչեւ Ապրիլ 18 (Ը . Ե . Ե .) քանի՞ վայր-
կեան անցած է :

Ճիշդ մէկ միլիար վայրկեան :
Մանթ աստղագալիս Մ . Գամբիլ Ֆրա-
մասիօն խի մը հաշուական ճշգրիտ
գործողութիւններէ վերջ , այսինքն
տարիները միլիոն հաշուով 365 օր ,
5 ժամ , 57 վայրկեան , 18 երկվայր-
կեան եւ 95 հազարերորդ երկվայր-
կեան հաշուելով , հաստատած է թէ
Յիսուս Դրիստոսի Բէթլէհէմի մէջ աշ-
խարհ գալէն ի վեր մինչեւ ներկայ
Ապրիլ 18ը , ժամը 6ը 18 վայրկեան
անցած , մէկ միլիար վայրկեան ե-
ղած է :

Աստուած շատ քաջել չտայ :

Շուն մը ընդհարումը Իսպիլոյ
Թագաւորին

Թագաւորին փողոցէն անցած ա-
տենը , շուն մը վազելով անոր սրունք-
ներուն մէջէն կտնցնի ու ժով , այն-
պէս որ թագաւորը ծունդին վրայ կը
ձգէ : Սա առաջին անգամ կարեւորու-
թիւն չը տար զգացած ցաւին . բայց
հետզհետէ կը նեղուի ու կը ստիպուի
բժիշկներ կանչել :

Ատոնք թագաւորը անկողնոյ մէջ կը
պառկեցնեն եւ կը հսկեն որ բնաւ վի-
րաւորուած ծունդը չը շարժէ :

Այս դէպքէն ի վեր արդէն բաւական
օր անցած է եւ թագաւորը զեռ ան-
կողնոյ կը ծառայէ :

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ժե 3 Ո ի 8 Ա Կ

Պոչքրէլէն

Տ. Տ. Գէորգ Աճէմեան 3 . Գրիգոր
Պատուելիեան 2 . Յովհաննէս Փափաղ-
եան 5 . Գրիգոր Նաթալեան 5 : Բիւ-
զանդ Սարգիսեան 2 . Տիկ . Տիրուհի
Սուքիասեան 2 . Ռուբէն Յովհաննէս-
եան 1 . Իսրայէլ Թորոսեան 1 . Սար-
գիս Յովհաննէսեան 5 . Եղիա Մար-
տիկեան 1 . Արշակ Կարապետեան 2 .
Յակոբ Յարութիւնեան 1 . Մարգար
Գրիգորեան 1 Ալիքսան Պողոսեան 1 .
Յովհաննէս Նիկողոսեան 50 սնդ . Մեծ
Եղբայրը 3 . Աւետիս Սիւճեան 3 . Յա-
րութիւն Զահրէճեան 1 . Խորէն Տա-
քէնեան 1 . Վահան Մկրտիչեան 1 .
Յարութիւն Բրթրոյեան եւ Վահ ամ
ընկեր . 5 . Մամբրէ Ժամարեան 1 . Մր-
կրր Յակոբեան 1 . Սարգիս Ինկիճեան
1 . Ղուկաս Յակոբեան 1 . Երուանդ
Հայրապետեան 1 . Նշան Զարգարեան
1 . Առաքել Գրիգորեան 5 . Կարապետ
Բիւլաֆեան 3 . Բարսեղ Արմաւիրեան 1
Անդրանիկ Զէյպէճեան 2 . Յարութիւն
Դաւիթեան 50 սնդ . Յարութիւն
Կոստանեան 2 . Յովակիմ Յակոբեան 1
Պողոս Սանտայճեան 4 . Կարապետ Մի-
քայէլեան 4 . Յարութիւն Առաքելեան
3 . Ուն 5 . Սիմօն Մարտիրոս 5 . Սա-
հակ Գէրթոսեան 5 . Միսաք Յակոբեան
2 . Յովհաննէս Շաքարճեան 5 . Յա-
րութիւն Արգումանեան 1 . Եփրեմ
Համբարձումեան 3 . Տիգրան Յովսէփ
եան 3 . Սարգիս Ս . Յովհաննէսեան 5 .
Դերենիկ Կ . Դաւիթեան 10 . Թորիկ
Կիրակոսեան 4 . Յարութիւն Կարա-
պետեան 4 . Ներսէս Գէորգեան 4 .
Նշան Սարգիսեան 5 . Միհրան Տաքէս 1
Մեղրոն Պողոսեան 2 . Ճապուրօֆ 10 .
Արմենակ Պարակեան 5 . Ազնաւորեան
5 . Մանուսի Թադէոս Տէր Միստոսեան
1 . Արիս Լազարեան 5 . Ազգասէր Ուն
5 . Պապա Սալիկ 50 սնդ . Նիկողոս
Մալիքեան 10 . Պուրթէյի քանաչայից
եւ տրուեցաւ 5 Յովսէփ Տէրուհեան 2 :
Պուրթէյէն հաւաքուած 324.75 սնդ .
ընդամենը 2523.65 սնդ մ :
Տէր Սարգիս հօր շոգնաւոր երկա-
թուղւոյ եւ ուսեստի ծախք 469.85 :
Ի Ճուրճով փոխանակուած 50 հատ
Ռումանական 20 հատ Թուրքի տար-
բերութիւնը 12.50 ընդամենը 482.35
Կը մնայ զուտ ֆրանք 2041.30
Վերջ

Ու յանկարծ սեւցած հոգին ցնցուե-
ցաւ , երբ իր աչքին պատկերուեցաւ
այն ապագայ երանութիւնը զոր խոս-
տացաւ Մօլլան անկեղծօրէն : Այլ
չկրցաւ հանդուրժել . . .

— Դուք կը խոստանաք ինձի ընտա-
նական երջանկութիւնն ապահովելու
այնպէս չէ՞ , միմուայ Գրիգոր Զաքոն ոս-
կոր մը գտնող շունի պէս :

— Այո՛ , բացարձակապէս , պատաս-
խանեց Մօլլան :

— Ատով չեմ կրնար ապահով ըլ-
լալ :

— Ուրիշ ի՞նչ կուգէ՞ք :

— Անձնական ապահովութեան պէտք
ունիմ :

— Անձնական ապահովութիւն . . .

— Այո՛ :

— Միթէ՞ք կը հաւատաք որ այդ մա-
սին չենք խորհած : Վստահաբար կը-
սենք ձեզի թէ՛ ձեր եւ ձեր ընտան-
եաց մազին դպող մը չպիտի գտնուի
այս գեղին մէջ , որովհետեւ պաշտպա-
նութիւնը զօրաւոր ձեռքերու մէջ
պիտի ըլլայ . . . Ըսել կուգենք թէ կա-
ռավարութիւնը քեզի պիտի հասնի ա-

մենափոքր նեղութեանդ ու վտանգ-
ներուդ մէջ . . .

— Ըսել է թէ դուք կառավարու-
թեան մարդիկ էք :

— Ի հարկ է՝ ահա՛ մեր նշանը :

Ու երկուքն ալ կ'որոշեցին իր բա-
նալով ցոյց տուին ոստիկանական
գործակալներու նշանները , զո-
րոնք պահած էին իրենց լոտիկին
տակ :

— Կրճանչէ՞ք այս նշանները , հար-
ցուց Մօլլան ժպտելով :

— Ինչպէս չէ . . . , միմիջեց աղե-
տաւոր Գրիգոր՝ խելթի մը պէս :

— Ուրեմն , այլեւս վախճալու բան
մը ունի՞ք :

— Ո՛չ :

— Դանի որ վախճալու բան մը
չունիք , ձեր գիտցածներն . . . առանց
ծածկելու , առանց կոտորածաւոր վե-
րապահումներու տակ գնելու , յայտ-
նեցէ՞ք կէտ առ կէտ եւ մանրամաս-
նաբար :

Գրիգորը չը մտածեց . . . ձեռքը խճին
վրայ չը դրաւ . . . մէկ խօսքով՝ չը
լսեց Աստուծոյ ձայնը , որ իր հոգեւոյն

բովանդակ ահա որութեան մէջ կար-
ձագանգուէր այդ պահուն :

— Ըսի թէ քանի մը օր առաջ ե-
րիտասարդ մը եւ մանկամարդ աղջիկ
մը կը գտնուէին հոս , յայտնեց Գրիգոր
լպիւր ու զազրելի բացատրութեամբ
մը , իրաւ է : Եւ այդ երկու անձա-
նութիւնը քուրտ պէկերու տարազը
կը կրէին , Բայց իրենք քուրտ չէին ,
այլ՝ հայ էին :

— Հայ էին . . . , բացառանջեց
Մօլլան անզուսպ հետաքրքրութեամբ
մը :

— Այո՛ , հայ էին . . . , չարուսա-
կեց Գրիգորը , երկու ամիսի չափ Ռէս-
Մէլիքին տունը մնաց մանկամարդ
աղջիկը : Երիտասարդը գիշերով կեր-
թար՝ երբեմն շարժւել մը կը վերա-
դառնար , երբեմն մէկ օրէն : Վերջա-
պէս ձերուներ մարդ մը երեւան ելաւ :
Աղջկան հայրն է , ըսին : Իրաւ է թէ
սուտ , չեմ գիտեր : Իրիկուն մը ձե-
րունին առաւ աղջիկը ու մեկնեցաւ :
Երիտասարդը մէկ օր վերջը գնաց :
Այս բոլորը գաղտնի պահելու ջանա-
ցին ինչ . սակայն յաջողեցաւ ամեն

բան իմանալու : Մինչեւ իսկ ձերու-
նին ու աղջկան դէպի Արճէշ քաղաք
երթալին ալ հասկցայ :

— Մերունին այդ քաղաքէն էր ,
ընդհանեց Մօլլան :

— Չէ՛ , ձերունին Գաւաչի էր .
բայց աղջիկն առած այդ կողմը կը
փախչէր որ զիւրո թեամբ մը օտար
երկիր կարենար անցնիլ :

— Դանի՞ օր է երթալին :

— Այսօր երեք օր կըլլայ :

— Եւ յուսա՞ք թէ անկից մեկնած
չեն :

— Ապահովապէս . ինչու որ կարա-
ւանին պիտի սպասէին : Դե՛ռ կարա-
ւանը չեղաւ :

— Ատիկա աղէ՛կ . ըսել է թէ Ռէս
Մէլիք կատարեալ գիտակցութիւն ու-
նէր անոնց ուսկի՞ց գալուն . . . ո՞վ
ըլլալուն . . . մանաւանդ փախչելու մա-
սին անանկ չէ՛ :

— Հարկաւ :

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

ԹԻԻՐԳԻՍ

Սօֆիա 20 թարիս
Լէ Թաւա վերիւրի օլան աթիւտէ
քի թէկէկրաֆ ճալիպի տըգգաթ
տըր :

«Պիր ազ թէկէկր օլընան Ֆիր
միւրան մէսէլէսի հազընտա Սըրպ-
լարըն լէհինտէ հալլ օլընաճագ
կէօրիւնիօր : Բուսիւնըն՝ էսքի
Սըրպիտան մատա Մաքէթո.
նիւնըն շիմալի-դարպ ճիհէթտէ,
պախուսա Սըրպալտէ, սըրպ միլլէ-
թիւնի գուզլէթլէտիւմէկէ իգտի-
զաւը վար տըր, քի պուշլար Ա-
լըստրիւնըն Սէլաւիկէ տօղրու ի-
լէրէմէսինէ վասիթա օլապիլէճէք
Արնաւուտարա գարըն տալանա.
պիւսիլէր : Մէսէլէ Սաւըրազա-
մըն պէյանը իւզրէ՝ թէտգըգ օ-
լընաճագ տըր : Էն էպէլ Սըրպա-
տէքի պուշլար տէսթթը Գեր.
Սինէսիւս Ֆիրմիւնըն թագաթի-
սինէ գարըն Սուլթանա իշթիքեա
էթմէք իշիւն էհալիսինի թէշլիք
իթմիշ օլտըղը սէպէպլէ, հիւքիւ-
մէթ անըն : Սթանպուլ էքգարքէա-
նէսինէ չըղըրըլմասըն՝ թալէպ
իթմիշ տիր» :

— Սթանպուլ տաքի սըրպ էլիսի
Մ. Կրուիշ վէ Գարատաղ էլիսի
Մ. Պագիշ Ապրիլ 21տէ պիրիք-
տէ Եըրտըղա միւրաճաթլէ, Ֆիր-
միւրանըն թաստիգինի թալէպ
իթմիշլէր : Սուլթան տախի չար-
չանպէ կիւնիւնէ գատար պիւ ճէ.
վապ վերէճէկինի պիւտիւրմիշ տիր :

ՏԱԽԻԼԻՅԷ

Բէսմի պիր սթաթիսթիքէ պի-
նաէն, Պուլկարիտա 546 թա-
պիպ, 615 ֆէլլէր, 201 էճգաճը,
154 էճգաճը մուսվինի, 21 տիշ-
ճի վէ 144 էպէ-գատըն մէվճաւտ
ըմըն :

— Սերպիւնըն Շապաջ շէհ-
րինտէ ըսեան թէշլիքինտէ պու-
լընուպտէ գաթլ օլընտըղըն հազ-
տըղըմըզ Ալաւանդիշին պիրատէ-
րի Արսո-Ալաւանդիշ Հուսէգարիա-
տան իխրաճ վէ սըրպ հիւքիւմէ-
թիւնտէն թագաթիպ օլընտըղը սէ-
պէպլէ Պուլկարիտա կէշմիշ տիր :
Ֆագաթ տախիլիշ նազըրը մէր.
գուլըն չաղըրուպ, անըն սինօրա
հազըն շէհրիւրտէ վէ Սօֆիա տա
գալմաճագ չարթը իլէ Պուլկա-
րիտա հաշաւասընա սերպէսթ
պուլընտըղըն պիւտիւրմիշ տիր :

— Էնէպի ճէրիտէլէրին՝ Մա-
քէթոնիա գոմիթէսինին սապըգ
ըշիսի Մ. Պորիս Սարաֆօլըն
ալէյհինէ հազմըն օլտըղըն պիր
թագըմ իթթիւրալար խիւֆընա
օլտարա՝ մէրգուլըն Շընէվտէ սիւ-
քիւնէթլի պիր հալտէ սաքին
պուլընտըղըն Մաւաճէր տէ Պալ-
գաւն հազըր :

— Պէրիւնտէն Վուիլէ Զալթաճկըն
պէյանը իւզրէ, Պուլկար վիւ-

քէլա ըշիսի Մ. Տանէվ Բէթերս-
պուրկա 83 միլիոն ֆրանկըզ
պիր իսթիգրազ գարալաշտըրմըն.
վէ թիւթիւն պանտըրօլլարը թէ-
մինաթ կէօսթէրմիշ :

— Սօֆիա տան վիհնեալա, պիւ-
տիւրիւթիւնէ կէօրէ, էհալիլի սի-
լաճ սաթըլմասըն պուլկար հիւ-
քիւմէթի մէնն իթթիկի կիպի,
1800 աւէա թիւֆէնկ թուլուպ
զապթ իթմիշ տիր :

— Պիր Պուլկար իմզասը իլէ
վէ պուլկարճա թապ օլընմըն պիր
քեաղըտ բարչասը էլիմիլէ կէշտի.
Անը հազան տէյօրքի «Պուլկա-
րիւնըն բօսթա վէ չըմէնտըֆէր
տաթիլէրինտէ պիր թագըմ էր-
մէնի, հաշուտի վէ թիւք մէմուր-
լար ինթիլտաճ օլընթօր. նէ ի-
շիւն օնլարըն Երիւնէ Պուլկարլար
թալին օլընմասըն. պիր չօք պուլ-
կարլար աճ տուրուր իքէն սալիւր
միլլէթ էֆրատընա իշ վէրմէլի
տիր» :

1. Պիր թիւն Պուլկարիտա մէ-
մուրլարըն գալմիլէթ ճիհէթիւնտէն
էկէր պիր սթաթիսթիք չըգարմագ
լազըմ կէլիւր իսէ, մէմուրլարըն
1000տէ իքիսի անճագ սալիւր միլ-
լէթլէրէ մէնպուպ օլուպ, 998ի
պուլկար տըր : Հալպուքի պուլըն
իւշ գըսմը գատար տէ մէմուրի-
լէթէ կէշմէք իշիւն բարթիգանլըզ
գօպալալուպ, պօշ կէշէլէր վար
տըր. օ՛ հալտէ իքի էրմէնի մէ-
մուրըն Երիւնէ պօշտա պուլընա՛ն
3,000 պուլկարը տօյուրմագ միւմ-
քին օլաճագ :

2. Մէքըրըն ապէս էֆըհարը
նէշը իտէն հէր քիմ իսէ, պիր
տէֆա տիւշիւնմէլի իտիքի, քէն-
տիսինին էնէպի ստտ իթթիկի
էրմէնի մէմուրլար Պուլկարիա
թագաւաճ օլուպ. պիր Պուլկարըն
վաթանա իշֆա իթթիկի ալը
Խըտմէթ ու ֆէտաքեալըզլարը
իճրա էլլէմէքտէ տիրլէր :

3. Պիր հիւքիւմէթ թագալաւա-
լարընըն գալմիլէթիւնի թէֆրիգ
իթմէքտէն զիյատէ տիրայէթ ու
մէհարէթ աբամալը տըր. չիմտիքի
պիր գաշ էրմէնի մէմուրլարըն տի-
րայէթի օլ տէրէճէ միւսէլլէմ տիր
քի, անլէրին Երիւնէ պիր ճահիւ
պուլկար թալին իթմէք հագսըզ-
լըզ օլաճաղընտան մատա՝ իտա-
րէնին վէ տսհապը մէսալիհին մա-
զարաթընա մուճիպ օլաճաղընը
տալիւր տիւշիւնմէլի տիր :

4. Մազալլահ, Պուլկարիա հիւ-
քիւմէթի էկէր աշըգ աշըղա 15-20
սէնէլիք մուգթէտիր մէմուրլարը
մէզհէպճէ Էրմէնի օլտըղլարը ի-
շիւն թարտ իտէր իսէ, պէօլլէ
պիր հարէքէթի տիւնեանըն հաշկը
զստտար հիւքիւմէթլէրին հարէ-
քեաթը իլէ թաթպիգ իտէպիլիթիգ.
Պարպար վէ զատտար թապիր օ-
լընան թիւք հիւքիւմէթի պիլէ
տահա օ՛ տէրէճէլէրէ կէլմէմիշ
տիր. քէնտիսինէ սաթըգ վէ մուգ.
թէտիր օլան պիւնէրճէ էրմէնի
լուլմ վէ պուլկար մէմուրլարը պու-
կիւնէ գատար իսթիլտաճ իթմէք-
տէ տիր :

Պէօլլէ պիր մէսէլէ օրթալա ա-
թան չախա էկէր միլլէթէրվէր
պիր Պուլկար ըտը իսէ, իշսիգ
գալուպ, կէօղլէրին հիւքիւմէթին
գատալարընա տիրմիշ օլան քէնտի
միլլէթտաշարընա պաշգա պիր
նասիհաթ վէրմէլի իտի. Անլէրի
սանաթա վէ զըրաթա թէշլիգ
իթմէք լազըմ տըր. Պուլկարիալը
վէ Պուլկարլարը չու պիւրհանը
մալիլէտէն գուրթարմանըն Եէ-
քանէ Եօլու օ՛ տըր :

ՊԷԼՃԻԳԱ

Պիրքսէլտէ վէ գազալարտա
իսթիլալըլար սիւքիւնէթլի պիր
հալ քէսպ իթմիշլէր տիր. իշճի-
լէր իշլէրինէ պաշալարար իսէտէ
գանուլըն էստիւնին թասսիհի (թա-
րեփոխութիւնը) վէ ինթիլապաթ
մէսէլէսինին հալլը պապընտա սօ-
սիալիսթ վէ սէրպէստիլէթ ֆըր-
գալարընըն ըշիպլէրի՝ գրալա իս-
թիւալար թագաթիմ իտէրէք, մէճ
լիսի մէպուսանըն տաղըտըլմասընը
թալէպ իթմիշլէր տիր. Պուլ Եէսէ-
լէլէրտէ գրալըն նէ թարիգ թու-
թաճաղը չիմտիլը մէճհուլ իսէտէ,
էկէր էհալինին իտտաւասընա քի-
ֆայէթ վէրմէլ իսէ, Եէնիտէն
իսթիլալ գալըշաճաղը չիւքհէ-
սիգ տիր :

ԲՈՒՍԻԱ

Տախիլիշ նազըրը Սիքեակի-
նին գաթիլի մահպիսհանէտէ գէ-
հիլլէնուպ թէլէթի նէֆա իթմիշ
օլտըղընը Ալման կազէթալարը
հազմըլար տըր :

— Քէզա մէքըրըն կազէթալա-
րըն պէյանը իւզրէ, Բօլթալա
վիլայէթիւնտէ քէօլլիւլէր վէ իշ-
ճիլէր իշիւնտէ հէյէճան հիւքմ իթ-
մէքտէ օլուպ, ըսեանա գալըշ-
մագ վէ գօնագալարը հազմալա
վէրմէք էֆըհարընտա ըմըլտիր :

ԲՈՒՄԱՆԻԱ

Պիր գաշ սէնէտէն պէրու Եա.
հուտիլէր Բուժանիատան հիճրէթ
իթմէքտէ տիրլէր : Շու սօն Եէտի
այ զարֆընտա Բուժանիատան
կիթմէք իշիւն 4,000 Եահուտի
բասաթօրթ չըգարթմըն օլտըղը
րէսմի գալտարլէ ըսպաթ օլընը-
յօր. պուլկարտան 3350ի կիթմիշ-
լէր տիր :

Եահուտիլէրին պու հիճրէթի Բու-
ժանիատա «անթիսէմիսթ» իտէա-
սընըն կիթմիքճէ Եաթըլմասը սէ
պէպիւնտէն տիր :

ՍԵՐՊԻԱ

Սօֆիա տա իճրա օլընան մի-
թիւնէ գարըն Պէլկարատա թէ-
ճէմիւ օլընաճագը մուգարէր օ-
լան միթիւնի հիւքիւմէթ մէնն իթ-
տի. ֆագաթ էհալի 2000 քիշի
գատար պանտէրալարլէ՝ միլլի նազ-
մէլէր թէրէնիւմ իտէրէք շէհրի
կէզտիլէր, վէ սէրա, ըն Եօնիւնտէ
«Եաշա՛սըն գրալ. Եաշա՛սըն սըրպ
էհօլիսի» պաղըրտըլար. պու սէս-
լէր իշիւնտէ պաղը «տիւշսին պուլ-
կարլար» սէտալարը տախի իշիւն-

միշ տիր. Սըրպ խարիճիլէ նէզարէ-
թիւնտէ գաթիլ զաէն շու տըր
քի, Բուսիա Ֆիրմիւնըն թաւ.
տիտիգի իշիւն թալէպիւնտէ տէ-
վաճ իտէճէք, վէ պուլկարլէ պէ-
րապէրտէ՝ Պուլկարիտա տախի
օնա պէտէլ պիր էլլիք Եաթաճագ
տըր :

ՍՊԱՆԻԱ

Գրալ Ալֆօնսըն ագըլպալիլ օլ-
մասընըն զիւնէթի ու թահիլի
այնը (Երգման պաշտամուլը) Մատ.
րիտտէ մալիս 11տէ պաշալալա
10 կիւն տէվաճ իտէճէք տիր :

ԻՆԿԻԼԹԷՐԱ

Ապրիլ 22տէ Լօնտա տա հարիգ
զուհուր իտուպ, շէհրին մէքէ-
զիւտէ պուլկարն Բէք չօգ մաղա-
զարը հանմըն տըր. 2,000,000
լիրա խասարաթ թահմին օլընը-
յօր :

ԵՂԱՐԲ Ն. ԲԵՍՏԱՆԵԱՆ

Ռոսաճաք Վաւաւա

ԿԱԼԱՆԹԱՐԻԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Փողոց Բրիտալիսա

Նորահաստա մասնաճիւղս պատիւ
ունի ծանուցանել թէ սա վերջին քա-
նի մը ամսուան փորձառութեամբ գա-
ղափար մը կազմած ըլլալով յաճախոր-
դաց ճաշակին վրայ, ուղղակի եւրո-
պական գործարաններէ անձամբ գնա-
ծելով ընտիր ապրանքներու շատ մը
տեսակներ, որոնք հասած են ու հե-
տզնեմէ ալ կը հասնին :

Ուստի կը հրաւիրենք յարգոյ յաճա-
խորդներն, որ Զատիկ առթիւ իրենց
գնումները չըրած ագնամ մը եւս այ-
ցիւն մեր վաճառատունն, ուր ինչ-
պէս գիշերու արժանութեան նոյնպէս
ալ ապրանքներու լաւագոյն տեսակէ
ըլլալուն պիտի համոզուին :

Նոր հասնող տեսակներն են.
Ամեն տեսակ եւրոպական ու տե-
ղական ընտիր կօշիկներ, շլոյ պօ-
թեր, հովանոցներ, գաւազաններ,
գուլպաներ, թաշկինակներ, խալ-
լուններ պուրնուզներ, սեղանի եւ
անկողնի ծածկոցներ, սեւ, ֆիլցե եւ
յարգէ գլխարկներ, ֆանէլաներ, ա-
րանց շապիկ, կրկնոց, օձիք, ման-
շէթ եւ փողկապներ, հոտեղէններ,
ըստ վերջին նորաձեւութեան կանանց
էշարներ, պուաներ, շալեր, հող-
մահար, ձեռնոցներ, ամեն տեսակ
գոտիներ, պուրնուզներ ծխատուփ,
գրամապանակ, խաղալիք եւն. եւն. :



ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Եթէ կուզէք հագնիլ կօ-
շիկներ որոնք իրենց վրայ
միացունեն ձեռի եւ գիւմաց-
կունութեան կատարելու-
թիւն եւ մանաւանդ գիշի
չափաւորութիւն, առանց վարանելու
գիւմացէք Ս. Պօրապանեանի. Մու-
սալլա, Տօքթ. Պասանօվիլի տանը
գիւմաց :

Одговорникъ Н. Драгулевъ

Печ на Хр. Н. Войниковъ—Варна